ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սահակ Լավրենտի Գյուլինյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ աշխատելու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ վարչապետին մշտադիտարկումների միջոցով առաջարկություններ ներկայացնելու նպատակով իրականացրել եմ ստացված տեղեկությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների, փաստաթղթերի և հաղորդումների ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում: Մասնավորապես՝ ներգրավված եմ եղել Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի ոռոգման համակարգի վերակառուցման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի մշտադիտարկման աշխատանքային խմբում, ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ջրագծերի վերակառուցման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի մշտադիտարկման աշխատանքային խմբում, Ծառայության ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 30-ի N 142-Լ հրամանով հաստատված գնումների ընթացակարգերի ռիսկերի գնահատման նպատակով ռիսկայնությունը որոշող չափորոշիչների, դրանց կիրառմամբ ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ ընտրանքի իրականացման, վերահսկողության ընթացքում կիրառվող առաջնահերթությունների որոշման աշխատանքներին, որով իրականացրել եմ գնման ընթացակարգերի հրավերների ընթացիկ վերլուծություն և պատվիրատուներին արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր առաջարկությունների ներկայացում,
2. Ծառայության ղեկավարի հանձնարարագրի հիման վրա ներգրավված եմ եղել ուսումնասիրությունների իրականացմանը, մասնավորապես՝ «Ջրառ» ՓԲ ընկերությունում իրականացվող ուսումնասիրության շրջանակում ներգրավված եմ ուսումնասիրություն իրականացնող խմբի կազմում,
3. Իրականացրել եմ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականների կատարում, մասնավորապես՝ ներգրավված եմ եղել գնումների ընթացակարգերի ռիսկերի գնահատման նպատակով ռիսկայնությունը որոշող չափորոշիչների, դրանց կիրառմամբ ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ ընտրանքի իրականացման, վերահսկողության ընթացքում կիրառվող առաջնահերթությունների որոշման աշխատանքներին,
4. Իրականացրել եմ այլ ընթացիկ և չպլանավորված աշխատանքներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ՝

Սահակ Գյուլինյան
« 21 » փետրվարի 2024թ.